ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/09, 16.04.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՀՀ ՏԶՆՆ-ԳՀԾՁԲ-19/18/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության կարիքների համար ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

1. Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել N 3 արձանագրության 3-րդ կետով ընկերության հայտը մերժելու մասին որոշումը.
2. Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում ընկերության հայտը բավարար գնահատելու մասին:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Գ.ՆԵՐՍԻՍՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

Helix

Helix Consulting LLC
Address: 2 Nikoghayos Adonts St., "Eraz" business centre,
2nd entrance, 2nd floor, Yerevan, Armenia
Phone: +374 60 508287 **Cell:** +374 95 20 30 78
E-mail: info@helix.am **Website:** www.helix.am

ՀՀ Ֆինանսների նախարարություն

«Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ի տնօրեն
Արամ Մխիթարյանից

Հարգելի գործընկերներ,
Սույն թվականի մարտի 1-ին մեր ընկերությունը ներկայացրել է մասնակցության հայտ հետևյալ ընթացակարգին՝

Պատվիրատու	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության
Պատվիրատուի հասցեն	0010 ք.Երևան, Մ.Մկրտչյան 5
Ընթացակարգի ծածկագիրը	ՀՀ ՏՉՆՆ-ԳՀԾՁԲ-19/18/1
Գնման առարկան	Ծրագրային ապահովման սպասարկման ծառայության ձեռքբերում

Մինչ հայտի ներկայացումը ՀՀ ԿԱ ՊԵԿ էլեկտրոնային համակարգի միջոցով ճշտել ենք մեր ընկերության հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունները: Մարտի 1-ի դրությամբ մեր ընկերությունը չուներ պարտավորություններ, ավելին՝ միասնական հաշվի վրա առկա էր 328027 ՀՀ դրամի չափով գերավճար:

Նշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի 07.03.2019թ. N2 արձանագրության համաձայն մեր ընկերությունը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող, սակայն նույն հանձնաժողովի 18.03.2019թ. N3 արձանագրության համաձայն մեր հայտը մերժվել է՝ համաձայն «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի, այն հիմնավորմամբ, որ ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրված տեղեկանքում ներկայացված են ժամկետանց պարտավորություններ 17000 ՀՀ դրամի չափով:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզ է դարձել, որ այդ պարտավորությունները վերաբերում են «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված դրոշմանիշային

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՍՏԻՑ N 07-12363-13
«22» 03 2019թ.

վճարներին, որոնց մասին մասին մեր ընկերությունը հարկային մարմնի կողմից որևէ իրազեկում չի ստացել:

Նույն ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել նաև, որ ՀՀ ՊԵԿ նախագահի 19.07.2017թ.-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն սահմանված վերահսկվող եկամուտների գծով պարավորորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևում «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով վճարման ենթակա դրոշմանիշային վճարը որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարավորություն նախատեսված չէ:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով, որ մեր կողմից առաջարկված գինը ամենացածրն է (հաջորդող գնից մոտ 1մլն դրամով), խնդրում ենք՝

- Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել N3 արձանագրության 3-րդ կետով ընկերության հայտը մերժելու մասին որոշումը,
- Պարտավորեցնել ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ընդունել որոշում ընկերության հայտը բավարար գնահատելու մասին:

Ներկայացված բողոքի բավարարվելու դեպքում, խնդրում ենք «900008000482» գանձապետական հաշվին փոխանցած 30000 գումարը հետ փոխանցել մեր կազմակերպության ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ Բանկում գտնվող 220000129423000 հաշվեհամարին:

Կից ներկայացնում ենք՝

- 01.03.2019 թվականի դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի պատճեն (անհաժեշտության դեպքում կարող ենք տրամադրել ՊԵԿ-ի կողմից էլ. ստորագրված տարբերակը)
- 900008000482 գանձապետական հաշվին կատարված վճարման անդորրագիրը
- Տնօրենի անձը հաստատող փաստաթղթի՝ անձնագրի պատճեն:

Հարգանքով՝
Տնօրեն

Ա. Մխիթարյան

22.03.2019թ.